



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԱՆՐԻ ՎԵՐՆԵՈՅ

ՀԱՅԵՐԸ ԵՎ ԻՐԵՆՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մարտեյլի մեջ հրատարակվող կոմունիստական «Մարտեյլ» օրաթերքը 1945 թվականի մարտի 30, 31 և 1946 թվականի ապրիլի 1 րվերուն մեջ հրատարակած և պատմական փաստաթուղթերու կոթնած հոդվածաշարով մը կպատասխանե այդ օրերուն Քիազիմ Կարապետիի՝ Թուրքիո մեջլիսին մեջ խոսած շնական և սպառնալից նադին: «Մարտեյլ»-ի հոդվածաշարը պատասխան մըն է նաև Ֆրանսայի Սոցիալիստ կուսակցության օրկան՝ «Փոփյուլեր»-ին, որ կհայտարարե րե իրավական գետին մը չունին հայկական և վրացական պահանջները Թուրքիայեն, այլ պարզապես արտահայտությունն են Սովետ Միության «իմպերիալիստական ձգտումներուն»:



ալս իրենց տեղը դնենք մարդիկը: Թուրք կառավարության պատգամախոսը՝ Քիազիմ Կարապետի հեղինակն է Սարըղամիշի անտառին մեջ մորթումված 60.000 հայերու ջարդին:

Անմիջապես, որ հայկական և վրացական պահանջները իմացվեցան Ֆրանսայի մեջ, Սովետ Միության հետ կապ ունեցող ամին բանի կատաղորեն թշնամի և կոմունիզմի դեմ սխտեմատիկ ատելություն սնուցանող մամուլը այս խնդրին շուրջ շղթայազերծեց հրապարակագրություն մը՝ որուն հանկերգն է «Սովետ Միության ձեռնարկիստական ձգտումները»:

Հանուն «հայաբանական ապահովության», «ազգային գերիշխանության» և «միջազգային դեմոկրատիայի» նույն այս մամուլը լայն և լավագույն տեղ տվավ թուրք դահիճներու պոռոտախոսությանը: անոնց մամուլին ամբարտաշտական ելույթներուն, ինչպես նաև անոնց պետական մարդոց ցափուտությունը:

Եվ մինչ ժողովրդային Հանրապետական Շարժման թերթերը իրենց օրհնությունները կուտային թրքական կեցվածքին, դեկտեմ-

բեր 22-ի «Փոփյուլեր»-ը կարտահայտվեց հետևյալ ձևով.

«Ու հիմա մեջտեղ կենտրոն բոլորովին շնախատեսված պահանջք մը, որ կթխի իմպերիալիստական նույն քաղաքականութենեն: Սովետ Միությունը առանց այլևայլի Թուրքիային կպահանջե Սև ծովի ափերին սկսյալ 300 կիլոմետր երկարությամբ և 100 կիլոմետր լայնքով հողամաս մը...»

«Թրուսիո Ֆրետերիքը կըսեր. «Նահանգ մը կգրավեմ: Ետքն է, որ կգտնեմ այս նրվաճուճ արդարացնող օրենսգետներ»: Սովետ Միությունն ալ պահանջներ կներկայացնի, սակայն թուի բացարձակ վստահություն չունի իր միջազգային օրենսգետներուն վրա, քանի որ հոգնությունը հանձն առած է հայթայթելու իր արդարացումները: Այս իրավունքներուն պատմությունը կերևի թե կսկսի մինչև 15-րդ դարեն, նախքան օսմանյան գրավումը...»:

Եվ «Փոփյուլեր»-ի խմբագիրը սրամտություն մը կփորձե, թելադրելով որ Հունաստանին տրվի Տրապիզոնը, քանի որ այս նավահանգիստը... (ու կհետևին «Քիլի» բառարանի 4802-րդ էջեն հապճեպով ընդօրինակված մի քանի տեղեկություններ):

Կրնայի՞ արդյոք «Փոփյուլեր»-ին հիշեց-

նեղ թե նույն այս նախահանգստին մեջ է, որ թուրքերը 1915-ին կիսեղդեհին հաղարավոր հայ մանուկներու եվ սակայն 15-րդ դարուն չէ, որ տեղի կունենային այս բաները: Ու բնական է, որ ոչ Լառուսը և ոչ ալ համայնագիտարանը չեն հիշատակեր այս իրողությունները:

Մարդ կշիռթի, կամա պատմական սխալներով լեցուն այսպիսի հողվածներու առջև: Քանի որ ի վերջո կամ այն է, որ արտաքին քաղաքականության այս խմբադիրը՝ բոլորովին ազնա է պատմության մասին և կամ կատարելապես վերահասու է թե հարկ չկա մինչև 15-րդ դար երթալու, թե այս օրինավոր պահանջները 1920-ի պահանջներն են և այն ատեն ակնհիշ կդառնա իր խեղաթյուրող մը ըլլալը:

Ասոր համար է, որ առանց «միջադպարին օրենսգետ» ըլլալու այս արտառոցությունները կհարկադրեն մեզ, հակիրճ վերհիշումը ընել այն իրադարձության: որոնք անցնող 25 տարիներուն ընթացքին տեղի ունեցան Արևելքի այս մասին մեջ:

Ավելի հստակ դարձնելու համար դեպքերու այս պատմականը, հաջորդաբար պիտի շոշափենք հետևյալ նյութերը:

1. — Հայաստանի 1914—1918-ի պատերազմի նախօրյակին:

2. — 1914—1918-ի պատերազմի ընթացքին հայոց խաղաղած դերը:

3. Մուսուրուի զինադադարը:

4. — Մերի դաշնագիրը և այս դաշնագրին բռնաբարումը թուրքերուն կողմէ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1914—1918-Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՆԱԽՕՐԶԱԿԻՆ

Որպես արևելյան և արևմտյան քաղաքակրթության միջև բաժանման կետ, Հայաստան 30 դարերի ի վեր կրած է այն մեծ ցնցումները, որոնք տեղի ունեցած են այս երկու աշխարհներուն միջև:

Դարերու ընթացքին, ետ անհատնում պատերազմներու, այս շրջանները հափըտակված են Արևելքի ու Արևմուտքի մեծ տերությունաց կողմէ:

Եվ սակայն, ըլլա իր ազգային թագավորներուն տիրապետության, ըլլա օտարին լուծին տակ, այս լեռներուն բնիկ սեփականատերը, աշխատավորը, արտադրողը՝ միշտ եղած է հայը, որ հայրենի հողը ուղղած է իր արյունով ու քրտինքով: Հաջորդաբար ոտնակոխված ու կործանված, հայը միշտ կառուցած է ու վերակառուցած:

Մեկ կողմ թողուք 1914-են առաջ ընթացող շրջանը և արագ ակնարկ մը նետենք

վերջին քսան տարիներու իր պատմության վրա: Քսան տարիներու պատմություն մը, որ հասակորեն կբացատրի իր այսօր բանաձևած պահանջները:

1914—1918-ի պատերազմի նախօրյակին Հայաստան բաժանված էր երկու մասերու:

1. — Անգրկովկասյան Հայաստանը 1.293.702 բնակիչներով:

2. — Թուրքահայաստանը, որ կբաղկանար թուրքերուն կողմէ հայերեն խլված 10 նահանգներ: Որով 2.026.000 հայերու բնակչություն մը դարերի ի վեր ենթակա էր թուրքական բարբարոսության, ճիշտ ինչպես Ալգասն ու Լոռնը 1870-են 1913 ենթարկվեցան գերմանական տիրապետության:

ՀԱՅԱՍՏԱՆ 1914—1918-Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԻՆ

1914-ի աշնան Գերմանիո դաշնակից թուրքերը պատգամավորներ ղրկեցին հայերու էրզրումի մեջ կայացող Ազգային Համագումարին և անոնց խոստացան ինքնավարություն տալ «Թրքական Հայաստանին», եթե հայեր Վրաստանի և Ադրբեջանի հետ համաձայնաբար կանգնեն Գերմանիո կողքին: Հայերը մերժեցին բացարձակապես և հերոսական պայքար մղեցին դաշնակիցներուն կողքին:

Մեծ եղավ հայոց կողմէ դաշնակից տերությունաց բերած զինվորական նպաստը: Անոնց խաղաղած դերը վճռական եղավ վերջնական հաղթանակը ապահովելու տեսակետին: Եվ սակայն անհատնում եղան անոնց կորուստները: Պիտի բավականանանք հոս հիշատակելով մի քանի պաշտոնական վավերաթուղթերու կարգ մը հատվածները:

Անգլիո Արտաքին Գործոց Նախարարության պետական ենթաբարտուղար Լորդ Ռոպերթ Սենիլ 1918 հոկտեմբեր 3-ին հետևյալ զեկուցումը կընն Լորդ Պրայսին:

«...Հայերու կողմէն հասարակաց դատին ընձեռուած ծառայությունները չեն կրնար մոռցուիլ: Հոս պիտի հիշատակեմ չորս կետեր, զորս իմ կարծիքով հայերը կրնան նկատել որպես ուխտը դաշնակիցներու օգնությամբ իրենց ազատագրության:

1. — 1914-ի աշնան Թուրքերը պատգամավորներ ուղարկեցին հայերու Ազգային Համագումարին և խոստացան ինքնավարություն տալ Թրքական Հայաստանին, եթե հայերը հանձնառու ըլլային պատերազմին ընթացքին աքտիվ կերպով օգնել Թուրքիո:

«Հայերը մերժեցին օգնել Գերմանիո զաշնակից Թուրքիո դատին»:

«2.— Մասամբ այս խիզախ մերժումին համար է, որ Թուրքիո հայերը 1915-ին սխտեմատիկորեն ջարդվեցան թուրք կառավարության կողմից: Բնակչության երկու երրորդը, ավելի քան 1.000.000 այրեր, կիներ, և մանուկներ բնաջնջվեցան ամեն դժոխսյին մեթոտներով և ամենայն պաղարյունությամբ»:

«3.— Պատերազմին առաջին օրին հայ ազգին կեսը կազմած է կամավորներու զորագուցներ, դիմագրավելով հարվածները Կովկասի պատերազմի ամենեն ծանր կռիվներին մի քանիին»:

«4.— Ռուսական բանակի քայքայումեն հետք, հայկական այս ուժերը հանձնեցին առին Կովկասի պաշտպանությունը և ամբողջ ութը ամիս ուշացուցին թուրքերու հաղթանակը, այս ձևով աչքառու ծառայություն մատուցանելով Միջագետքի բրիտանական բանակին»:

Պերլինի ամերիկյան նախկին դեսպան ձեյմս Ու. ձերբեր 1920 մարտ—7-ին Ամերիկյան կառավարության ներկայացուցած հուշագրով մը կըսեր.

«Հայերը 200 հազար կանոնավոր զորք և կամավորներ տվին դաշնակից բանակներուն և 75 հազար հոգի կորսնցուցին ռազմադաշտերուն վրա»:

Հիշեցնելի հետք, թե հայերը ինչպես մերժեցին թուրքերու ինքնավարության խոստումը, ձերբեր կպատմեն թե ինչպես 1.000.000 այրեր, կիներ, և մանուկներ ջարդվեցան «պատմություն մեջ իր նմանը չունեցող վայրագությունով մը»:

Ապա ձերբեր կմեջբերեն Ֆոն Լյուտենտորֆի հուշերեն հատված մը, ուր սպարապետ Հինտենպուրկի սպայակույտի պետը կընդունի թե՛ «Գերման պարտության ազդակներեն մեկը եղավ վստելանությունը պահապան և թե հայերն ալ առ այդ իրենց աջակցությունը բերին, իրենց քաջարի դիմագրությամբ ութը ամիս հապաղեցնելով Բաքվի գրավումը»:

Ի վերջո գորավար Ալեմպի կհայտարարեն.

«Պաղեստինի մեջ իմ հրամանատարության տակ գրված հայկական զորամասերը կռվեցան մեծ վարպետությամբ, և մեծ բաժին մը ունեցան հաղթանակին մեջ: Պաղեստինի մեջ Ֆրանսա ալժիրական միակ դուստարակ մը ունեւր: Ֆրանսական դրոշի տակ գտնվող հայկական զորամասերն են,

որ գրավեցին սուրիական ծովափը և Կիլիկիան»:

«Որով սոսկ մարդկայնական պարտավորություն մը չէ դաշնակիցներու և Ամերիկայի՝ հայերու հանդեպ ունեցած պարտավորությունը, քանի որ անիկա հիմնված է ռազմադաշտերու վրա՝ Հայաստանի կողմից ընձեռուած ծառայությանը վրա»:

ՄՈՒՏՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ (1918 ՀՈԿ. 30)

Դաշնակից տերությունց և Թուրքիո միջև զինադադարը կնքվեցավ Մուտրոսի մեջ, 1918 հոկտեմբեր 30-ին:

Հայերը, որոնք պատերազմի ամենեն ծանր կորուստները կրած ըլլալու առանձնաշնորհը ունեին—կորսնցուցած ըլլալով իրենց ամբողջ բնակչության երկու երրորդը— կհուսային թե դաշնակից հաղթանակը ընդհանուր բարովորում մը պիտի բերեր իրենց վիճակին:

Սակայն այն հողերը, որոնք կռված էին զատվիլ օսմանյան հին կայսրութենէն և սահմանված էին Հայկական Պետության, միակը եղան, որ չգրավուեցան դաշնակիցներուն կողմից:

Ի հեճուկս Մուտրոսի զինադադարին թրքական բանակը մասնակիորեն միայն զինաթափվեցավ:

Թուրք զինվորներն իրենց զինքերն ու ռազմանյութերը կրաշխին իսլամ բնակչությանց: Զբանդվեցին զենքերու և զինանյութերու մեծ պահեստները, որոնք տեղավորված էին Ասիական Թուրքիո դաշնակիցներուն հակակշիռին տակ գտնվող շրջաններուն մեջ:

Հակառակ զինադադարի պայմաններեն մեկուն, որ կնախատեսեր դաշնակից պրավում մը, անմիջապես որ ծագին թուրքերուն կողմից ստեղծված միջադեպեր և անկարգություններ, ոչ մեկ միջոցառում եղավ երբ թուրք կառավարությունը ձեռք զարկավ նոր ջարդերու և տարագրությանց:

Ասկէ դատ, 1918—1920 զինադադարի և խաղաղության վեհաժողովի միջև ինկող երկու տարիներուն թուրքերը մեծ թվով հզոր պաշտպաններ ճարեցին եվրոպայի մեջ, դիմելով թրքական դիվանագիտության համար սիրելի եղող մեթոտի մը.—մերթապագայութուններ հարուցանել տերությունց միջև:

Այս ձևով ետ հրկու տարվան երկարատե և տաժանելի բանակցությանց, միշտ թուրքերը կշարունակեին իրենց սպանդի գործը, 1920 օգոստոս 10-ին ստորագրվեցավ Սիրի դաշնագիրը: Հոն Հայաստանը ևս կգտնվեր դաշնակիցներու

կարգին: Ահա վասիկ Հայաստանի վերաբերյալ գլխավոր հոգիվածները.

ՀՈՂՎԱՄ 88.— Թուրքիա. կհայտարարեն թե՛ ինչպես այդ ըրած են դաշնակից տերությունները, կընդունին Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն մը:

ՀՈՂՎԱՄ 89.— Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև դաշնագիր բարձր կողմերը, կընդունին Միացյալ Նահանգներուն նախագահին իրավաստության հանձնել Թուրքիո և Հայաստանի սահմաններուն ճշտումը և ընդունիլ անոր որոշումը, ինչպես նաև բոլոր այն կարգադրությունները որ ան կրնա առաջադրել, ծովուն վրա ելք մը տալու համար Հայաստանին: Ինչպես նաև վերոհիշյալ սահմաններուն մերձակա օսմանյան հողերուն ապագինսկորակա նացման համար:

ՀՈՂՎԱՄ 90.— Այն պարագային, երբ 89-րդ հոգիվածին հիման վրա սահմանին որոշվելով Հայաստանին փոխանցելի ըլլան թրքական տիրապետության տակ գտնվող հայկական նահանգներուն (Թրքահայաստանի) ամբողջությունը կամ մեկ մասը, Թուրքիա հիմակվեն կհայտարարեն թե՛ որոշման թվականի օրեն սկսյալ կհրաժարի փոխանցված հողերուն վրա ամեն իրավունք, և ալին: Խաղաղության դաշնագրի երեք ութիշ հոգիվածներ կորոշեն Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հասարակաց սահմանները ետ այս երեք տերությունցի համաձայնություն:

1920 նոյեմբեր 22-ին նախագահ Ուիլսոն, առ ի գործադրություն 89-րդ հոգիվածին, կարձակեր իր իրավաստական վճիռը, Հայաստանի տալով մինչև այդ օրը թուրքերու կողմն գրավուած, սակայն սկիզբն հայերուն պատկանող հողերը: (Հոս «Մարտեյնզ» կհրատարակե Հայաստանի քարտեսը Ուիլսոնյան սահմաններով):

Սակայն ոչ Սևրի դաշնագրի հստակ և ճշգրիտ պայմանները, ոչ ալ Մուսթուֆի բինաղաղարի պայմանները հարգվեցան թուրքերու կողմն:

Եվ ահա 1920 սեպտեմբերի կիսուն թուրք զորքերը հրամանատարությունը տակ Բիսպիմ Կարապեքլիի, որ այսօր դարձյալ ասպարեզ կիջնե թրքական դիվանագիտության մեջ, առանց որե՛կ ձևով պատերազմ հայտարարելու, հարձակեցան Սևրի դաշնագրի նոր Հայաստանին վրա և խլեցին այդքան սուղ գնով ստացված հողերը:

Մի քանի ամիսներու կատաղի կռիվներ ետք, հակառակ բոլոր հանդիսավոր խոս-

տումներուն, դաշնակիցներեն լքված Հայաստանը (ինչպես նաև Վրաստանը) Թուրքիո ձգեցին Կարսի, Արտահանի և Սուրմալուի շրջանները:

Նույն ժամանակամիջոցին է, որ Հայաստանն ու Վրաստանը ինքզինքնին հռչակեցին Սովետական Հանրապետություն և մտան Սովետական Սոցիալիստական Հանրապետությանց Միության մեջ:

Տեսանք, թե ինչպես Հայաստան 1914—1918-ի պատերազմին ընթացքին, Կովկասի մեջ խաղացած վճռական դերով իր արյան գնով շահեցավ Սևրի դաշնագիրը: Նմանապես տեսանք թե Թուրքիա ինչպես բռնաբարեց դաշնագիրը և հափշտակեց հայկական հողերը:

Այսպես ուրեմն. խաղաղության դաշնագիրներու լույսին տակ և սույն շրջանի պաշտոնական վավերաթուղթերու ընգմեջն, իրողություն մը կհաստատվի.— թե 1920-ին Թուրքիան, պարտված երկիր մը և Գերմանիո դաշնակիցը, բռնաբարեց Մուսթուֆի դիվանագրարի պայմանները և Սևրի դաշնագիրը:

Թուրքիա հափշտակեց այն հողերը, որոնք հիշյալ դաշնագրի 89-րդ հոգիվածով խոստնված: Նախագահ Ուիլսոնի իրավաստության համաձայն, Հայաստանի պիտի վերադարձվին: Թուրքերուն կողմն վայրագորեն ներխուժված այս հողերն են, որ հայ բնակչությունները կպահանջեն այսօր:

Այս երկու երկիրներու ժողովուրդները նադիններու դեմ մղված պայքարին մեջ հակադեմոկրատիկ թերին Սովետ Միության պատերազմական ճիգին:

Հարցուր հազար հայեր և վրացիներ մեռան բոլոր ռազմադաշնություն վրա հանուն ազատության և դեմոկրատիայի:

Այս ժամանակամիջոցին թուրքերը երևութական շեղորոշության մը դիմակին տակ թանկագին օգնություն մը ընծայեցին հիտլերականներուն:

Հայ և վրացի ժողովուրդները իրենց արյան գնով շահեցան իրավունքը՝ ամբողջ աշխարհի երեսին հայտարարելու իրենց պահանջները, ենչ որ կարելի չէ ամբաստանել որպես «բռնաբարության արդյունք»:

1920-ի անարդարություններն ամենեն մեծը դարձան իր նվազագույն բան մըն է:

Լավ մը պիտի շինդայինք, սլաշտոնակից «Փոփյուլեր», եթե 1918-ին մեկը որպես իմպերիալիստ ամբաստանեք Ֆրանսան,

քանի որ ան կվերստանար 50 տարի առաջ Գերմանիո կողմի գրավուած Ալգաւն ու Լոռենը:

Կտեննք ուրեմն, թե հարկ չկա մենչև 15-րդ դար երթալու: Կբալն գիտնալ թե Ռուբրիայն պահանջված հողերը տակաւին թաց են թուրքերուն կողմն խողխողված ալիւի քան մեկ միլիոն այրերու: Կիւնիրու: և մանուկներու արյունով, թուրքեր, որոնք այսօր կհամարձակվին դեմոկրատիայի անունով խոսիլ, պահպանելու համար իրենց ասպատակութեանց պտուղները:

Կբալն հիշել թե սույն շրջանի պետական մեծագուն մարդիկը՝ արդեն իսկ ամենայն արդարութեամբ որոշած էին. թե ոչ, որ է Հայաստանին վերադարձին այս հողերը:

Մեծն Բրիտանիո Արտաքին Գործոց Պետական Քարտուղար Պ. Պալֆուր 1917 նոյեմբեր 6-ին կհայտարարեր.

«Մեր պարտականութեանն է թուրք կառավարութենէն իւրեւ այն ժողովրդները, որոնք կազմալուծվեցան թուրքերուն կողմն, որոնց դարպացումը կասեցուցին թուրքերը, և որոնք, վստահ եմ, պիտի ծաղկին, եթե պատշաճ կառավարութեան մը տրվի իրենց...»:

Դաշնակիցներու անունով Ֆրանսիական Հանրապետութեան Նախագահ Պ. Արիսթիտ Պրիան 1917 հունվար 10-ին կհայտարարեր.

«Դաշնակիցներու պատերազմական նշնադրականներն մեկը պետք է ըլլա ազատագրումը թուրքերու արյունոտ բռնակալութեան ենթարկված բնակչութեանց և եվրոպայն դուրս նետվիլը օսմանյան կայսրութեան, որ որոշապես օտար է արեւմտյան քաղաքակրթութեան... Երբ հնչե օրինավոր հատուցումներու ժամը, ֆրանսական Հանրապետութեան կառավարութեանը մոռացութեան պիտի չտա հայ ազգի տառապագին փորձութեանները և իր դաշնակիցներուն հետ համաձայնաբար, հարկ եղած միջոցառումները պիտի ընեն խաղաղութեան և հառաչդիմութեան կյանք մը ապահովելու համար անոր»:

1917 դեկտեմբեր 21-ին Պ. Լոյտ շնորհ կհայտարարեր բրիտանական խորհրդարանին մեջ.

«Հայաստանը երբեք պետք չէ վերստին

դրվի թուրքերու աղետալի տիրապետութեան տակ»:

Ֆրանսայի վարչապետ Պ. ժ. Քլեմանսօ կհայտարարեր 1918 հուլիս 14-ին.

«Նախահարձակումներու ամենեն անարդարին զոհ դարձող Ֆրանսան իր պահանջներուն մեջ արձանագրած է հարստահարված ազգերու ազատագրութեանը: «...Ուրիս եմ հաստատելու թե ֆրանսական Հանրապետութեան, ինչպես և Միացյալ Թագավորութեան կառավարութիւնը, չեն դադրած հայ ազգը դառնել այն ժողովրդներուն կարգին, որոնց ճակատագիրը դաշնակիցները կհոգան կարգադրել համաձայն մարդկայնութեան և արդարութեան գերագույն օրենքներուն»:

Մեծն Բրիտանիո Արտաքին Գործերու պետական ենթաքարտուղար՝ Լորտ Ռոպերտ Սեյիլ 1918 նոյեմբեր 18-ին Համայնքներու Տան մեջ կհայտարարեր.

«Ինչ կվերաբերի մեզի, ու ես կկարծեմ թե այս հարցին մեջ կրնամ խոսիլ կառավարութեան անունով, խորապես հուսալիաբ պիտի ըլլամ, եթե թուրք կառավարութենէն չուր մը կամ հյուսիս մը իսկ ձգվել Հայաստանի մեջ»:

Իտալիո վարչապետը՝ Պ. Օրլանտո 1919 նոյեմբեր 26-ին կհայտարարեր.

«Ըսեք հայերուն թե կյուրացնեմ իրենց դատը: Պիտի պահեմ իմ այս հանձնառութեանս»:

Պ. Պ. Միլլերան, Ռեյմոն Պուանքարե և շատ մը ուրիշ պետական մարդիկ այդ շրջանին նմանօրինակ հայտարարութեաներ ըրին:

Այսպես ուրեմն, մոռցված են այս բուլորը:

Այո, և կամ լավ եւս՝ մարդիկ կուզեն մոռնալ:

Տարօրինակ է հաստատել թե ֆրանսական որոշ թերթեր, որոնք ինքզինքնին սոցիալիստ և դեմոկրատ կկոչեն, արձագանքը կըլլան թուրք ֆաշիստներուն, անոնց, որոնք կխեղաթյուրեն պատմութեանը և կփորձեն խեղդել արդարութեան այս կոչը, որ այնքան հստակորեն կբարձրանա այս հողին ընդերքեն, հող մը, որ ընդարձակ գերեզմանոց մըն է անժանոթ հերոսներու և օսմանյան բարբարոսութեան մարտիրոսներու:

(«Ժողովուրդի ձայն» մարտ 5, 6, 7, 8 1946 թ. Պեյրուք)